ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«07» դեկտեմբերի 2018 թվականի № 178-Ա

«ԵՐԵՐՈՒՅՔ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԵՐԵՐՈՒՅՔ» ՍՊ ընկերության նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 144-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ «ԵՐԵՐՈՒՅՔ» ՍՊ ընկերությանը 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 03/29.4/2602-18 գրությամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում ընկերության կողմից թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն ընկերությունը 01.12.2017թ-ի դրությամբ ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների ապառքներ՝ պետական տուրքի մասով 5 607.5 հազար դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով 864.9 հազար դրամ, ինչպես նաև Ընկերությունը սահմանված ժամկետներում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վարույթն իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրությամբ արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը և Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով, 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-261 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետում և 5-րդ կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի

5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. «ԵՐԵՐՈՒՅՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ՀՀ Շիրակի մարզի Ռունազի պեմզային տուֆերի «Երերույք» տեղամասի ընդերքօգտագործման իրավունքը, դադարեցնել:
2. Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի դեկտեմբերի 18-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/261 /նախկին 14/544/ թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-261 ակտը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-261 պայմանագիրը:
3. Ընդերքի գործակալության պետին՝

1) 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3) Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:
6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

12/7/2018

X

VERIFIED OCSP 07-Dec-18 19:12:54 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118